

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «2013–2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՒԱՆԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԵՆՒԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՆՑՈՒԹԵՐԻ, ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐԱՆՏԻՆԻ, ԳՅՈՒՂ-ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

I. Իրավիճակի նկարագրությունը

1. «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) միակ կազմակերպությունն է հանրապետությունում, որն իրականացնում է կենդանիների, այդ թվում նաև՝ կենդանիների և մարդու համար ընդհանուր, թռչունների, մուշտակամորթ գազանների, ձկների և մեղուների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման սահմանում, սերմամոնիթորինգ, շիճաբանական հետազոտություններ, Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերում, ինչպես նաև կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի, սննդամթերքի, թունաքիմիկատների փորձաքննություն: Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 631-Ն որոշման համաձայն կազմակերպությունը վերակազմակերպվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության: Վերջինիս գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

1) կենդանիների հիվանդությունների (այդ թվում՝ թռչունների, մուշտակամորթ գազանների, ձկների և մեղուների) լաբորատոր ախտորոշման սահմանումը.

2) կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի փորձաքննության կազմակերպումը.

3) սերմոնիթորինգի իրականացումը.

4) շիճուկաբանական հետազոտությունների իրականացումը.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին օրգանիզմների, հիվանդությունների և մոլախոտերի հայտնաբերումը:

2. Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի դրությամբ առկա է 599243 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, 590214 գլուխ մանր եղջերավոր կենդանի, 108088 գլուխ խոզ, 9912 գլուխ ձի և այլն, որոնց նկատմամբ պարբերաբար իրականացվում են վերը նշված լաբորատոր հետազոտությունները: Հաշվի է առնվում նաև թռչունների,

մեղվաընտանիքների, ձկների, ճագարների, վայրի կենդանիների զգալի քանակների առկայության գործոնը:

3. ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայության անասնահամաճարակային վիճակի վերաբերյալ նախորդ տարիների հաշվետվությունների տվյալները վկայում են, որ անասնաբուժական և բուսասանիտարական ոլորտների կայուն զարգացմանը մեծապես նպաստում են կազմակերպության կողմից իրականացվող հետևողական աշխատանքները կենդանիների (այդ թվում՝ կենդանիների և մարդու համար ընդհանուր) մի շարք հիվանդությունների լաբորատոր ախտորոշման, անասնահամաճարակային վիճակի դաշտային ուսումնասիրության, կենդանական և բուսական ծագման հումքի, մթերքի և սննդամթերքի, բույսերի կարանտին օրգանիզմների, թունաքիմիկատների փորձաքննության ուղղությամբ:

4. Համաձայն ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայության տարեկան հաշվետվության տվյալների՝ 2009 թվականի հունվար-դեկտեմբեր հաշվետու ժամանակահատվածում ՀՀ մարզերի 932 համայնքներում կազմակերպության կողմից ախտորոշվել են բրուցելյոզ, պաստերյոզ (ԽԵԿ, ՄԵԿ և խոզեր), տուբերկուլյոզ, լեյկոզ (ԽԵԿ), կարմրախտ և խոզերի աֆրիկական ժանտախտ, կատաղություն (շներ), ինչպես նաև մի շարք այլ պարտադիր ծանուցման ենթակա հիվանդություններ (սիբիրախտ, բրադզոտ, խշխշան պալար և այլն):

5. Համաձայն ՀՀ ԳՆ-ի սննդամթերքի անվտանգության պետական ծառայության տվյալների՝ 2010 թվականի հունվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում կազմակերպության կողմից ախտորոշվել են բրուցելյոզի (ԽԵԿ և ՄԵԿ), պաստերելյոզի (ՄԵԿ և խոզեր), տուբերկուլյոզի և թեյլերիոզի (ԽԵԿ), նյուքսյան հիվանդության (թռչուններ) և խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդություններ: Դեպքերի վաղ հայտնաբերումը հնարավորություն ընձեռեց ժամանակին իրականացնել համալիր միջոցառումներ և կանխել հիվանդությունների հետագա տարածումը:

6. 2007 թվականին կազմակերպության ֆինանսավորման ծավալը կազմել է 190328,0 մլն դրամ: 2008 թվականին ֆինանսավորման ծավալի աճը կազմել է 4,3%՝ 198840,0 մլն դրամ: 2009 թվականի ֆինանսավորման ծավալի աճը կազմել է 8,5%՝ 217400,0 մլն դրամ, որի շրջանակում կատարվել է 1145448 հետազոտություն: 2010 թվականին ֆինանսավորման ծավալը նվազել է 14,9%՝ 185000,0 մլն դրամ, որի շրջանակում կատարվել է 1012011 հետազոտություն: 2011 թվականին ֆինանսավորման ծավալի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 3,1%՝ 190898,2 մլն դրամ, որի շրջանակում կատարվել է 815000 հետազոտություն:

7. Կազմակերպությունը, որպես փորձարկման լաբորատորիա, համապատասխանում է ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտների պահանջներին և հավատարմագրված է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից (վկայագիր N AST-001.Q-0002-2011, նույնականացման նշագիրը F51), ունի լայն հավատարմագրման ոլորտ:

II. Ծրագրի նպատակները և խնդիրները

8. Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ բնակչությանը պաշտպանել կենդանիների և մարդու համար ընդհանուր (զոոնոզ) վարակիչ հիվանդություններից, ապահովել կենդանական և բուսական ծագման անասնաբուժասանիտարական տեսակետից անվտանգ սննդամթերքով, հայտնաբերել բույսերի կարանտին հիվանդությունները (այդ թվում՝ վնասատուները), կատարել ՀՀ-ում վաճառվող թունաքիմիկատների հետազոտություն:

9. Վերը նշված նպատակներին հասնելու համար և վերապահված լիազորությունների շրջանակներում կազմակերպության հիմնական խնդիրներն են՝

- 1) հիվանդությունների (այդ թվում նաև՝ բրուցելյոզի) լաբորատոր ախտորոշում.
- 2) վարակամերժության աստիճանի որոշում (դաբադի և խոզերի դասական ժանտախտ).
- 3) փորձանմուշների փորձաքննությունը բույսերի կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերում.
- 4) Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված բույսերի պաշտպանության միջոցների վաճառքի կետերից նմուշառումների թունանյութերի ազդող նյութի որոշման լաբորատոր փորձաքննություն.
- 5) ռեակտիվների, ախտահանիչների պահպանություն և բաշխում «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային և տարածաշրջանային կենտրոններին:

III. Ծրագրի բյուջեն

10. Ծրագրի իրականացման համար նախատեսվում է ֆինանսավորում պետական բյուջեից՝ ըստ աղյուսակի.

Ծրագրի անվանումը	2013 թ. (հազ. դրամ)	2014 թ. (հազ. դրամ)	2015 թ. (հազ. դրամ)
Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում	223335,9	243560,1	291341,2

11. Բյուջետային ֆինանսական միջոցները նախատեսված է ծախսել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 631-Ն որոշմամբ կազմակերպությանը վերապահված հետևյալ ուղղություններով՝

- 1) կենդանական և բուսական ծագման հումքի, նյութի և սննդամթերքի անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական տեսակետից անվտանգության աստիճանի լաբորատոր որոշմանը և սահմանմանը.

- 2) կենդանիների (այդ թվում՝ կենդանիների և մարդու համար ընդհանուր) վարակիչ հիվանդությունների հետզծելիությանը, վաղ հայտնաբերմանը և արագ արձագանքմանը, ինչպես նաև բույսերի առավել վնասակար և կարանտին օրգանիզմների արեալի ճշտմանը:
- 3) կենդանիների (այդ թվում՝ կենդանիների և մարդու համար ընդհանուր) կարանտին օրգանիզմներով վարակված բույսերի վտանգավոր հիվանդությունների հարուցիչների վաղ նույնականացմանը և դրանց ՀՀ տարածք ներթափանցման կանխարգելմանը, ինչպես նաև թունանյութերում ազդող նյութերի չափաքանակների որոշմանը:

IV. Ծրագրի իրականացման միջոցառումները

12. Հայաստանի Հանրապետության «2013-2015 թվականների գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծրագիրն ամեն տարի իրականացվում է 3 միջոցառումներով:

Միջոցառումների անվանումը	Չափի միավորը	2013թվական	
		Փորձաքննությունների քանակը	Իրականացման համար անհրաժեշտ բյուջեն (հազ. դրամ)
1. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների (այդ թվում նաև՝ բրուցելյոզի) լաբորատոր ախտորոշում և վարակամերժության աստիճանի որոշում	հատ	900148	193035,9
2. Բույսերի կարանտին, առավել վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում. հանրապետությունում թունաքիմիկատների վաճառքի կետերից վերցված նմուշներում թունանյութերի ազդող նյութի որոշման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում	հատ	6600	27300.0
3. Ռեակտիվների, ախտահանիչների պահպանության և բաշխման հետ կապված ծախսեր	-	-	3000.0
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	223335,9
Միջոցառումների անվանումը	Չափի միավորը	2014 թվական	
		Փորձաքննությունների	Իրականացման

	վորը	քանակը	համար անհրաժեշտ բյուջեն (հազ. դրամ)
1. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների (այդ թվում նաև՝ բրուցելյոզի) լաբորատոր ախտորոշում և վարակամերժության աստիճանի որոշում	հատ	900148	213260,1
2. Բույսերի կարանտին, առավել վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում. հանրապետությունում թունաքիմիկատների վաճառքի կետերից վերցված նմուշներում թունանյութերի ազդող նյութի որոշման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում	հատ	6600	27300.0
3. Ռեակտիվների, ախտահանիչների պահպանության և բաշխման հետ կապված ծախսեր	-	-	3000.0
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	243560,1
		<i>2015 թվական</i>	
<i>Միջոցառումների անվանումը</i>	<i>Չափի միավորը</i>	<i>Փորձաքննությունների քանակը</i>	<i>Իրականացման համար անհրաժեշտ բյուջեն (հազ. դրամ)</i>
1. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների (այդ թվում նաև՝ բրուցելյոզի) լաբորատոր ախտորոշում և վարակամերժության աստիճանի որոշում	հատ	930000	259651,2
2. Բույսերի կարանտին, առավել վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում. հանրապետությունում թունաքիմիկատների վաճառքի կետերից վերցված նմուշներում թունանյութերի ազդող նյութի որոշման նպատակով լաբորատոր փորձաքննությունների իրականացում	հատ	6600	27300.0
3. Ռեակտիվների, ախտահանիչների պահպանության և բաշխման հետ կապված ծախսեր	-	-	3000.0
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	291341,2

V. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

13. Ծրագրի իրականացումը կնպաստի անասնահամաճարակային իրավիճակի բարելավմանը, ինչը հնարավորություն կընձեռի գործնականում կիրառել Եվրախորհրդարանի 178/2002 EC որոշմամբ ամրագրված կենդանական ծագում ունեցող սննդամթերքի անվտանգության ապահովման հիմնարար սկզբունքները, դրանք են՝

1) նպաստել կենդանիների առողջության պաշտպանությանը վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններից.

2) գյուղատնտեսական ոլորտում գործող արտադրող և վերամշակող կազմակերպություններին ապահովել անասնաբուժական տեսակետից ապահով հումքով.

3) կանխել բնակչության շրջանում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների հնարավոր բռնկման դեպքերը:

14. Ծրագրի իրականացումից ակնկալվող հիմնական արդյունքներն են՝

1) ցամաքային և ջրային կենդանիների որոշ վարակիչ հիվանդությունների լաբորատոր ախտորոշման իրականացում և լաբորատոր փորձաքննության եզրակացության 95-98 %-ոց հավաստիություն.

2) պատշաճ լաբորատոր գործունեության կիրառում և որոշ էնդեմիկ վարակիչ հիվանդությունների նկատմամբ լաբորատոր ստուգում անցած առանձին տեսակի անասնազվխաքանակի առկայություն.

3) պատշաճ լաբորատոր գործունեության կիրառում և որոշ էնդեմիկ վարակիչ հիվանդությունների նկատմամբ լաբորատոր ստուգում անցած կենդանական ծագման հումքի, մթերքների և սննդամթերքի առկայություն.

4) պատշաճ լաբորատոր գործունեության կիրառում և կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերում.

5) պատշաճ լաբորատոր գործունեության կիրառում և Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված բույսերի պաշտպանության միջոցների վաճառքի կետերում կատարված նմուշառումների թունանյութերի ազդող նյութի որոշման լաբորատոր փորձաքննությունների արդյունքում անորակ թունաքիմիկատների հայտնաբերում.

6) անասնաբուժական սարքավորումների, ախտորոշիչ միջոցների, ռեակտիվների, ախտահանիչ նյութերի, ապակեղենի և այլնի պատշաճ ընդունումը, պահպանումը և տեղափոխում-հանձնումը հասցեատերերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ